251 Շատ անգամ է իմ նավակը

1. Շատ անգամ է իմ նավակը
Ալեկոծության հանդիպել,
Սպառնացել է փոթորիկը
Իր ալիքներով ինձ ծածկել:
Թվացել է այս պայքարում,
Թե նավահանգիստ չեմ հասնի,
Կգտնեմ վախճանս ծովում,
Ծովի անդունդն օրրանս կլինի:

2. Եվ ամեն անգամ գալիս ես
Դու պարզապես ջրի վրայով,
Փոթորիկն հանդարտեցնում ես,
Հույս ես տալիս Քո հայտնվելով:
Փոխվում է իմ տրտմությունը
Ուրախության, խաղաղության,
Ծողում է ջինջ հորիզոնը,
Թվում է՝ էլ չկա վտանգ:

3. Առջևում դեռ փոթորիկ կա,
Վտանգավոր է իմ ճամփան,
Խնդրում եմ, Տե՛ր, մի՛ հեռանա,
Ինձ հետ եղիր՝ ըստ Քո խոստման:
Այնժամ վստահ կլինեմ ես
Ապահովությանը ճամփիս,
Դրա երաշխիքը Քո սերն է,
Արդ, խնդրում եմ, ինձ հետ եղի՛ր: